Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հաղորդակցման կարողությունների զարգացումը պատմության ուսուցման ընթացքում

N 175 միջն. դպրոցի հետազոտող ուսուցիչ՝ Զոյրա Հունանյան

Ներածություն

Մարդկային գործունեությունն ունի երկու հիմնական տեսակ՝ առարկայական և խոսքային: Առարկայական գործունեությամբ կուտակված փորձը սերնդեսերունդ և տարածության մեջ փոխանցվում է խոսքային գործունեության՝ հաղորդակցման միջոցով: Չկա մարդկային գործունեության որևէ ոլորտ, որը հնարավոր չլինի դիտարկել հաղորդակցման տեսանկյունից:

Հասարակական գիտություններն ամբողջությամբ կառուցված են խոսքային հաղորդակցման վրա: Պատմության դասավանդման ընթացքում առաջանում են մի շարք խնդիրներ, որոնցից մեկն էլ հաղորդակցության խնդիրն է, երբ աշակերտը չի կարողանում արտահայտել իր մտքերը:

Դասանյութը կարդալուց հետո, միայն անգիր արած նախադասություններ է շարադրում, նրա մոտ պատմել չի ստացվում: Դա հատկապես արտահայտվում է այն ժամանակ, երբ նոր են սկսում ուսումնասիրել առարկան: Խնդիրը վեր հանելով, ուսուցիչը պետք է գտնի ուղիներ, թե ինչպես օգնի սանին, իր մտքերը շարադրել սահուն և բովանդակալից: Հաղորդակցական տեխնիկան շատ կարևոր է ձևավորել դեռևս կրտսեր օղակում, իսկ միջին դասարաններում, տանելով պարզից-բարդը, պետք է օգնել դասանյութը մաս, մաս շարադրել, այնուհետև տարբերակել գլխավորը՝ երկրորդականից:

Ի՞նչ է հաղորդակցական կարողությունը

Հաղորդակցման գործընթացում հիմնական միջոցը խոսքն է: Խոսքով մարդիկ փոխանցում են տեղեկություններ, գնահատում իրավիճակները, շփվում և հարաբերություններ հաստատում:

Խոսքը մարդկանց հաղորդակցման, ինչպես նաև դրա մասնակիցների սոցիալական կարգավիճակի հաստատման միջոցներից մեկն է:

Խոսքը մարդկանց հաղորդակցման, ինչպես նաև դրա մասնակիցների սոցիալական կարգավիճակի հաստատման միջոցներից մեկն է: Խոսքը համարվում է հաղորդակցման գործընթաց, որը տեղի է ունենում հաղորդակցման միջոցների օգնությամբ: Այն հնարավորություն է տալիս արտահայտելու իր մտքերն ու զգացմունքները ընկալողի, լսողի կամ պատմողի կողմից: Անձի ձևավորման և զարգացման գործընթացը սկսվում է ուսումնական պրոցեսի ընթացքում, որտեղ պետք է ուշադրություն դարձնել հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, ինչն իրականացվումէ ուսումնառության ընթացքում, տարբեր մեթոդների կիրառմամբ:

Մանկավարժական հաղորդակցումը մանկավարժի կողմից կոնտակտի հաստատումն է սովորողների հետ դաստիարակչական նպատակներով: Դրա տակ հասկացվում է հետադարձ կապ, գործողությունների և վարքի փոխադարձ կապ, գործողությունների և վարքի փոխադարձ համաձայնեցվածություն, որտեղ կարևորվում է դաստիարակչական նպատակը:

Ավելի լայն իմաստով, մանկավարժական հաղորդակցում ասելով կարող ենք հասկանալ նաև շրջապատի մարդկանց, ընկերների, ծնողների հետ շփումը, որի ընթացքում ևս ձևավորվում է հաղորդակցական հմտություններ և կարողություններ: Հաղորդակցման նպատակները կարող են լինել բազմաբնույթ, որը դաստիարակում և զարգացնում է երեխային: Յուրաքանչյուր աշակերտ հաղորդակցվում է ըստ իր գիտելիքների, ֆիզիոլոգիական զարգացման ընձեռած հնարավորությունների, պահանջմունքների և ապրումների: Բանավոր խոսքը մարդու մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Բանավոր խոսքի զարգացումը հենվում է բացառապես լեզվական գործառության վրա: Կարևոր խնդիր է երեխային իր խոսքի նկատմամբ վստահություն ներշնչելը, նրան անկաշկանդ խոսելու, արտահայտվելու հնարավորություն տալը:

Սաների ինքնադրսևորման, արտահայտվելու բնական հակումների բավարարումը, նրանց ազատ արտահայտվելու խրախուսումը, նրանց խոսքը ուշադիր, հարգանքով լսելը վստահություն է ներշնչում, նրանք ավելի ինքնավստահ են դառնում, խոսքն ավելի ամբողջական և կազմակերպված: Այսպիսի մոտեցման դեպքում հղկվում է երեխայի խոսքը, ավելի ընկալելի է դառնում նրա ասելիքը:

Ցանկացած միջամտություն, դիտողություն, որքան էլ այն տեղին լինի, կաշկանդում է երեխային, նվազեցնում նրա արտահայտվելու, խոսելու ցանկությունը: Խոսքը մշակվում և շտկվում է այն գործածելիս: Շտկումներն ու հղկումները կատարվում են տարատեսակ խաղ-վարժությունների և մեթոդների միջոցով:

Ամեն երեխա (աշակերտ) պատմող է: Պետք է ընդամենը դասը նրա համար դարձնել մատչելի, հետաքրքիր և յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ մոտեցումը լինի անհատական, հաշվի առնելով նրա մտավոր և լեզվական կարողությունները: Խոսքի և մտքի համապատասխանությունը զարգացման որոշակի մակարդակ է պահանջում: Այդ մակարդակին կարող են հասնել աշակերտները, եթե հետևողականորեն իրագործվեն խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքները:

Ի՞նչպես զարգացնել հաղորդակցական

Կարողությունը

Ուսումնական գործընթացը ունի տարաբնույթ փուլեր, որոնց ընթացքում կիրառվող մեթոդները տարբեր են: Մեթոդը՝ նպատակին հասնելու ուղի է աշակերտի և ուսուցչի համատեղ գործունեության ընթացքում, որով ուսումնասիրվելիք նյութը հասցվում է աշակերտներին:

Հետևաբար շատ կարևոր է, թե ինչ մեթոդ պետք է ընտրել տվյալ գործընթացին համապատասխան, որպեսզի ուսուցանվողը հեշտությամբ ընկալի և վերարտադրի դասանյութը:

Մեթոդները կարող են լինել մի քանի տեսակի՝

1. Ոսուցանող՝ նոր գիտելիքի ձևավորում.
2. Նախավարժանքային՝ ստացված գիտելիքների ամրապնդում, հարցադրումների, առաջադրանքների միջոցով:
3. Զարգացնող՝ լրացուցիչ տեղեկատվության միջոցով ստեղծագործական ընդունակությունների զարգացում:
4. Դաստիարակող՝ սովորողի հուզական ինտելեկտի ակտիվացում, որը կնպաստի անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Պատմության առարկայի դասավանդման ընթացքում զարգանում է պատամական մտածողությունը: Հասկանալու համար, թե ինչպես է ստեղծվում պատմությունը, անհրաժեշտ է որոշակի աշխատանք կատարել աղբյուրների հետ, ինչպիսիք են օրինակ՝ հին նկարները, արխիվային փաստաթղթերը, փաստական ֆիլմերը և այլն:

Սովորողները պետք է հասկանան, թե ինչպես է տեղեկատվական աղբյուրը վերածվում պատմական աղբյուրի: Կարողանա հետևություններ կատարել: Ուսուցիչը պետք է օգնի սովորողներին զարգացնել այս ընկալումները: Պետք է դասարանում պատամական աղբյուրներից հաճախ օգտվել , հնարավորինս շատ <<բաց>> առաջադրանքներ կիրառել, որոնց շրջանակում սովորողները կկարողանան աղբյուրների հիման վրա հարցադրումներ առաջ քաշել և զարգացնել:

Պատմական գիտելիքի և ընկալման կարևոր մաս է բացատրությունն առ այն, թե ինչու են պատմական տվյալ իրադարձությունները տեղի ունեցել: Մի բան է ծանոթ լինել պատմական

շարադրանքին, և բոլորովին այլ բան է դրա իրական ընկալումը, ինչը հնարավոր է այն դեպքում միայն, երբ սովորողները կարողանում են վերլուծել անցյալի շարադրանքը և բացատրել, թե ինչու են տվյալ իրադարձությունները զարգացնել հենց այդ կերպ: Ի՞նչպես կարող ենք օգնել սովորողներին զարգացնել այս ընկալումները: Հարցը, իհարկե, ենթաբաղադրիչներ ունի, քանի որ այսօրինակ ընկալումների զարգացումը ենթադրում է մի շարք կարողություններ, այդ թվում.

- բարդ բառապաշարի ընկալում, լեզվի հմուտ կիրառում.
- վերլուծական դասակարգումների ընկալում.
- Անցյալի ժամանակագրության և իրադարձությունների տիպերի, գործընթացների ու իրավիճակների վերաբերյալ խոր գիտելիք:
- Փորձը ցույց է տալիս, որ այսօրինակ բառապաշար ու կարողություններ զարգացնելու շատ արդյունավետ միջոց է սովորողների՝ աշխարհի մասին ունեցած գիտելիքի հետ զուգահեռներ անցկացնելը: Այլ կերպ ասած՝ որպեսզի սովորողը կարողանա տիրապետել անհրաժեշտ բառապաշարի, դասակարգումների, հասկացությունների կիրառմանը, ավելի հեշտ է այդ ամենը նրան բացատրել արդեն ծանոթ կամ հեշտ ընկալվող թեմաների շրջանակում: Կիրառելի է նաև սովորողների՝ պատճառահետևանքային տրամաբանությունը զարգացնող մի շարք ուղիներ:
- սովորողներին հանձնարարել ստեղծել այնպիսի իրադարձությունների մոդելներ և դիագրամներ, որոնք տեսանելի կերպով ցույց կտան պատճառահետևանքային կապերը և արդյունքները:
- սովորողներին տալ պատճառների ցուցակ կամ պատճառները ներկայացնող քարտեր, որոնք նա պետք է բացատրի՝ ինչպես առանձին, այնպես էլ միասին վերցված
- սովորողներին տալ իրադարձության շարադրանք, որի որևէ դրվագ նրանք պետք է բացատրեն շարադրանքի տարբեր տարրերը իրարից առանձնացնելու և վերակազմելու միջոցով:
- սովորողներին հանձնարարել անցյալում որոշում կայացնող որևէ մարդու դեր ստանձնել, ստեղծել որոշումների կայացման պահերի վերարտադրման համատեքստը և որոշումներ կայացնել ու կանխատեսումներ անել դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:
- սովորողներին հանձնարարել այլընտրանքային պատմության (ինչ կլիներ, եթե...) վերլուծություն իրականացնել, որպեսզի քննեն ու ամրապնդեն իրադարձությունների տարբեր բաղադրիչների միջև եղած կապերի վերաբերյալ սեփական ընկալումը:

Ուսումնական ռազմավարությունները սովորողների համար պատճառահետևանքային մտածողություն զարգացնելու հնարավորություն են ստեղծում և միջոց են պատմական նյութի ընկալումը ավելի խորացնելու համար:

Եթե ցանկանում ենք, որ ի թիվս մտածողության այլ ձևերի, նրանք տիրապետեն պատճառահետևանքային մտածողությանը, ապա պետք է սեփական մտքերն ընդարձակ շարադրելու հնարավորություն տալ նրանց:

Նշված մեթոդներից բացի շատ կարևոր է ՏՀՏ կիրառման մեթոդիկան պատմության դասաժամերին: Պատմական նյութի մատուցման ընթացքում նպատակահարմար է կիրառել համակարգչային ցուցացդրական ծրագրեր որոնց միջոցով ավելի պատկերավոր և մատչելի ձևով է մատուցվում հիմնարար գիտելիքները: Ենթադրենք դասի ընթացքում ցուցադրվում է Արենիի քարանձավից գտնված հինավուրց կոշիկը, որի միջոցով կարելի է պարզել՝ արդյոք Արենիի շրջանում ապրող մարդիկ նստակյաց կենսագործունեություն են վարել, թե քոչվորներ են եղել:

Մի քանի հարցադրում կարելի է կիրառել՝

1. Ի՞նչ նյութերից էր պատրաստված կոշիկը:
2. Կոշիկի պատրաստման նյութերի տեսականին ինչերն են՝ կաշի, թել, ասեղ:
3. Ի՞նչ արհեստներ կառանձնացնենք այդ ժամանակների համար:

Մտագրոհի, քննարկումների միջոցով սովորողները կբացահայտեն, որ հազարավոր տարիներ առաջ, Արենիի շրջակայքում ապրել են կաշեգործներ, թել մանողներ, կոշկակարներ, հետևաբար ակնհայտ է դառնում, որ մարդիկ այս բնակավայրում վարել են նստակյաց կենսագործունեություն: Նյութի ցուցադրմանը զուգահեռ աշակերտները ներկայացնում են բովանդակությունը: Ցուցադրման մեթոդով զարգանում է նաև աշակերտի տեսողական հիշողությունը: Փոքրիկ պատմական ֆիլմ ցուցադրելուց հետո, անջատում ենք էկրանը և հարցեր ենք տալիս, ինչ տեսաք և մտապահեցիք: Յուրաքանչյուր աշակերտը կարող է 2-3 նախադասությամբ վերարտադրել տեսաֆիլմը: Այնուհետև տալիս ենք եզրափակիչ հարցը՝ Ի՞նչ կարող եք պատմել տվյալ ժամանակաշրջանի մասին: Վերջում ամփոփում ենք աշակերտների առաջ քաշած վարկածները:

Ուսումնական գործընթացն և ուսուցումն, իրենցից ներկայացնում են հաղորդակցական խնդիրների լուծման համակարգ, որոնք իրականացնում է ուսուցիչը: Աշակերտները ներգրավվում են շփման մեջ ուսուցչի կամ դասարանական խմբի հետ՝ փորձելով գտնել ճիշտ

հաղորդակցման ճանապարհներ: Այդ է պատճառը, որ հաղորդակցման գործընթացում հաճախ կիրառում են ոչ միայն խոսքային, այլև ֆիզիկական գործողություններ, ժեստեր, դիմախաղ և այլն:

Հաղորդակցման հմտությունը զարգացնելու համար պետք է կիրառել՝

1. Մենախոսության մեթոդը՝ պատմել
2. Երկխոսության մեթոդը՝ զրույց
3. Համագործակցային ձևերը՝ խմբային կամ կոլեկտիվ աշխատանք:

Հաղորդակցման կարողությունը զարգացնելու համար օգտակար է նաև իրադարձության համատեքստի քննարկումը պաստառի միջոցով: Պատմական որևէ համատեքստը ներկայացնելուց առաջ կարող ենք սովորողներին ցուցադրել համատեքստը բնորոշող պաստառ և նրանց հրավիրել քննարկման: Հարցնում ենք, թե պատմական ինչ իրադարձության կամ ժամանակահատվածի է այն անրադառնում, ինչու՞ է ընտրվել այդ արտահայտչամիջոցը, ի՞նչ է ակնարկում պաստառը և այլն: Խոսքի զարգացման համար կիրառելի է նաև գաղափարներ և կերպարներ համադրելու, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները դուրս բերելու հմտությունը: Հարցերի միջոցով աշակերտները դուրս են բերում ուսումնասիրվող նյութում առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Սովորողներին բաժանում ենք խմբերի.

1-ին խումբը ներկայացնում է ընդհանրությունները (օրինակ՝ Լևոն 2 և Հեթում 1)

2-րդ խումբը ներկայացնում է տարբերությունները.

3-րդ խումբը ի մի է բերում երկու արքաների գործունեության ընդհանուր գծերը:

Հակիրճ բնորոշումներով խմբի յուրաքանչյուր աշակերտ պատմում է իր յուրացրած նյութը:

Ամփոփման փուլում 3 խմբերին էլ տրվում է համապատասխան հարցադրումներ, որով հնարավորություն է տրվում յուրաքանչյուր աշակերտի, ներկայացնելու նաև մյուս խմբի առաջադրանքից հատվածներ: Այս գործողության նպատակն է, սովորողների մոտ զարգացնել մեջբերումներ և հղումներ անելու հմտություններ: Դա նրանց կստիպի ինքնուրույն կարծիք ձևավորել և արտահայտել այն:

Մեկ այլ մեթոդով՝ աշակերտներին տալ հնարավորություն <<փոքր դաս>> կազմակերպել: Այդպես նրանք, ոչ թե որևէ թեմա կպատմեն մյուսներին, այլև ստիպված կլինեն ամեն ինչ

հանգամանորեն բացատրել՝ առավել խորությամբ ներգրավվելով դասապրոցեսում: Այս ռազմավարությունը կզարգացնի վերլուծելու, ներկայացնելու և բացատրելու հմտություններ: Հաղորդակցման հմտությունների զարգացման մեկ այլ տարբերակ է խմբային քննարկման դերային քարտերը: Խմբային քննարկումների կամ առաջադրանքների ժամանակ, բոլոր սովորողների ներգրավածությունն ու մասնակցությունն ապահովելու համար, յուրաքանչյուր սովորողի տալիս ենք դերային քարտ, որը կհստակեցնի տվյալ աշակերտի դերը քննարկման մեջ:

Նշված մեթոդները կիրառելի են ուսուցման գործընթացի բոլոր փուլերում, որոնք կնպաստեն հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Այս գործընթացը կատարվում է ուսուցչի հսկողությամբ և ունի 3 փուլեր՝

1.-ին փուլում՝ պարզունակ հաղորդակցական հմտությունների յուրացումն է, աշակերտներին ներառել դասարանական շփման գործընթացում հարցերին տալ սպառիչ պատասխան, պատմել տրամաբանորեն և հերթականությամբ:

2.-րդ փուլում՝ աշակերտը հստակ և սահուն արտահայտի սեփական կարծիքը, խոսքում կիրառի օրինակներ թեմայի վերաբերյալ, միտքն արտահայտի պատկերավոր, հակիրճ, շփման մեջ մտնի դիմացինի հետ, կարգավորի սեփական խոսքի արագությունը և ձայնի բարձրությունը:

3.-րդ փուլում՝ կարողանա երկխոսություն անցկացնի, կազմակերպի քննարկում, մասնակցի առարկայական թեմաներով խաղերի և մրցույթների:

Հաղորդակցման ընթացքում միավորում են միմյանց փոխկապակցված գործառույթներ:

Խոսքային հմտությունների զարգացումը տեղի է ունենում:

- Առարկայական բովանդակության ուսուցման միջոցով.
- Կիրառական հետազոտական հմտությունների զարգացման միջոցով.
- Սոցիալ-հաղորդակցական հմտությունների զարգացման միկջոցով:

Պատմության ուսուցման գործընթացում հաղորդակցական կարողությունների ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է այդ կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդների ու միջոցների լիարժեք կիրառությամբ: Կարևոր չէ, թե մեկ դասի ընթացքում քանի մեթոդ է կիրառվում, կարևորն այն է, թե ինչպես է կիրառվում, քանի որ դասի արդյունավետությունը կախված է մեթոդի ճիշտ և տեղին կիրառումից:

Շատ կարևոր է դասավանդման երեք հիմնախնդիրները.

1. Ի՞նչ սովորեցնել.
2. Ինչու՞ սովորեցնել.
3. Ինչպե՞ս սովորեցնել.

Վերջաբան

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմաննուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Դպրոցում ուսուցման գործընթացը ճիշտ կազմակերպելու նպատակով, պետք է օգտվել տարբեր մեթոդներից՝ զննական, ցուցադրական, խոսքային և այլն:

Յուրաքանչյուր առարկա կարող է ունենալ տարբեր մեթոդական ուղղություններ և հասկացություններ, բայց նրանցից միայն որոշ մասն են բացահայտում առարկայի էությունը, նրան հատուկ առանձնահատկություններ, որոնք և տարբերում են տվյալ առարկան այլ առարկաներից: Թե՞ ավանդական, թե՞ ժամանակակից մեթոդներ կիրառելիս, միշտ օգտվում ենք մեր կողմից ստեղծված հնարներից:

Բոլոր մեթոդների ու հնարների վարժությունների հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, նրա անմիջական և ակտիվ մասնակցությունը:

- Աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով.
- Աշակերտն ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական մտածողությանը.
- Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ.
- Ձևավորվում է ինքնակատարելագործման ձգտում:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում, ուշադրություն եմ դարձնում խաղային, դերային, ժամանցային ձևերին, պատմելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար: Հաջողված իմպրովիզների միջոցով. կախված ուսումնական նպատակից, շարունակական պրոցեսի ընթացքում հասնում եմ վերջնարդյունքին:

Գրականություն

Զ. Աղաջանյան – Հաղորդակցական իրավիճակ և էթիկետային բանաձևերի հաջորդականության կարգը

Բանբեր. Երևան-2018

Գիտական տեղեկագիր – Երևան-2018

Գայանե Հովհաննիսյան – Հաղորդակցման տեսություն. մաս առաջին

Աննա Ալեքսանյան – Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում

Երևան-2015

Գիրք պատմության ուսուցման – Ինչո՞ւ, Ինչպե՞ս

Երևան-2020